# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

յՕրագրութեանց Սինոդի Ս. Էջմիածնի

Վանքական կառավարութեան Անդամոց միամեայ ժամանակը լրացած լինելով յանցեալ յունիս ամսոյ մէջ, Վեհափառ Կաթուղիկոսի հրամանաւ կարգեցան 'ի տեղի առաջնոցն՝ Անդրէաս Արք եպիսկոպոս Նախագահ, և անդամք՝ Ներսէս վարդապետ Կոստանդերեան, և Ստեփաննոս վարդապետ Մխիթարեան, քարտուղար՝ Խաչատուր Ղահզպաշեանց՝ մի տարի ժամանակաւ ըստ կանոնաց վանքական կառավարութեան.

Տաթևու Հայոց հոգևոր կառավարութեան նշանակեցաւ անդամ միաբան Ս. Աթոռոյս Յովակիմ վարդապետ Ղամքեան միանգամայն և վարժապետ դպրոցին.

Սուրբ Աթոռոյս ատենական ժողովոյ Անդամոց տարեկան ժամանակն ևս լրացած լինելով, Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակաւ կարգեցան Նախագահ ժողովոյն՝ Անդրէաս Արք եպիսկոպոսն. և Անդամք՝ Խաչադրէոս վարդապետ. Գերազնիւ Պրոկուրոր սինոդի Կ. Սաակեանց Ատենադպիր Ս. Խաչխանեանց, Ատենաճանաւոր Նիկողայոս Տէր Յովսէփեանց. և Թարգման Սինոդի՝ Սարգիս Սարութեանց.

Ղարաբաղու վիճակային կոնսիստորիային Հայոց՝ կարգեցաւ անդամ Յովակիմ վարդապետ Տէր Գրիգորեան Կարևանցի.

Մուղնւոյ Ս. Գէորգայ վանաց Տաճարի նորոգութեան համար վերատեսուչ կարգեցաւ բարեպաշտօն Պ. Սիմէօն Սամումեանց գործակցութեամբ վանահօր նոյն վանաց Սափայել վարդապետի.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն. եր. 29)

Հայկ նահապետի Աստուածապաշտութեան վրայ հաստատօր տեղեկութիւն տալէն առաջ, հարկ կը լինի մեզ այժմ հաստատել յառաջ թէ նախնիքն Հայկ Հայոց նահապետը 'ի Բելայ հսկայէն փախուցե՞լ էր Սենաար՝ թէ ոչ, և թէ իր իշխանութեան սկիզբը՞ն ի՞նչ ժամանակ եղաւ.

Մեր ազգային պատմութեան հաւատք լինելը՝ ամէն ազգերուց յայտնի է. որ անուանեալ է Հայոց բանագլխէ այն մատենին Մարիբաս Կատինայ Ասորւոյ հետաքրքրելով, որ Աղէքսանդր Մակեդոնացւոյ հրամանաւը քաղդէացոց լեզուէն թարգմանուելով, Նինուէ քաղաքը արքունի դիւանին մէջ կ'պահուէր մինչև Մծբին Արշակայ օրը. ուստի մերն Վաղարշակ հանել տուաւ նոյն Մարիբասայ ձեռքով մեր ազգի հայկազանց պատմութիւնը. Այս տեղեկութիւնը մեր նախնի պատմագիր Խորենացին հաստատ գրելով, կ'յաւելցնէ թէ " յայսմ մատենէ Մարիբաս Կատինայ ընտրեալ ազգիս միայն հանեալ պատմու-